




ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 172

7 ՆՈՅԵՄԲԵՐ 1914

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՏՕՒԱՑՈՑՑ

Նոյեմբեր	8	†	Կիր. քձ.	Թ. Զկնի կաշին:
	9		Բշ. քկ.	Սրբոյն Մելիսոսի Անճիոֆայ Հայրապետին, եւ Մինասայ Եղիպսացւոյն եւ Մելիայ Եղիսկոպոսին, եւ Եբորայ Բահանային եւ Շինու սարկաւազին:
	10		Դշ. զձ.	Ս. Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի հայրապետին:
	11		Դշ. զկ.	Պահոց:
	12		Եշ. զձ.	Սրբոցն Գուրիասայ, Սամոնասայ եւ Աւբիբայ սարկաւազին, եւ Ռոմանոսի միայնակեցին եւ Մանկանն խոստովանողի եւ Հիւսիֆոսի զինաւորին:
	13		Ուր. զկ.	Պահոց:
	14		Շք. աձ.	Ս. Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹԱԹԱԹ-ԵՐԹ-

Չորրորդ տարի ⑦ 7 Նոյեմբեր 1914 ⑦ Թիւ 172

«Մերական Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ տարաքաթերը շա-
ունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մասնաւոր ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տել, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ կարդ. Մէրի Տէյ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թերզեան Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամտաւ:

ՊԻՈՍ Ժ. (*)

(Շար.)

Դեր. Յովսէփ Սարթոյի քահանայութեան
առաջին խնամեան արդէն բոլորելու վրայ
էր, երբ 1867ին, Մայիս ամսուան մէջ Թրէվի-
զոյի եպիսկոպոսը հինգ ժողովրդապետու-
թիւններու համար համընթացական մրցում
մը բացաւ:

Մայիս 4ին ապագայ Պիոս Ժ. ինդրա-
պիր մը կը զրկէր մրցողներու դանկին վրայ
արձանագորութեւն համար: Այս ինդրագորոյն
կ'ընկերանար՝ Քասդէլֆրանքոյի Աստուածա-
ծին եկեղեցւոյն աւագերէց Տ. Փրանկիսկոս
Պուօղոյի հետեւեալ նշանակալից Ընծայու-
թեան թուղթը:

«Ստորագրեալս կը հաւատարմեմ եւ կը վկայեմ որ,
Յովսէփ-Մելիոն Սարթօ խնաման, Թումպոյոյի մասրա-

նապետը, միշտ եւ հաճապագ քարի օրինակներով յոյժ
գարդարուած ընթացք մը ունեցաւ, եւս անյողողոյ
կերպով յարսեւել ու ճշդապահ եղաւ յոյր եկեղեցա-
կան քարեկարգական կանոններու գործադրութեան մէջ.
եռանդեալից՝ իր սեպհական պաշտամանը մէջ. հռակ
ուրեմն ա՛յնպէս, որ ամենեւնի զեղեցիկ յոյսերը կու տայ
որ հոգեւոր հովիւ ըլլալու ամենածանր պաշտօնին մէջ
որուն կը ցանկայ, մեծապէս պիտի կատենայ յաջողիչ:
«Այսպիսիս կը վկայեմ ի սեր յոյ եւ անկեղծաւոր
ճշմարտութեան»:

Քննութիւնները մեծաւ յաջողութեամբ
անցընելէ յետոյ, Յովսէփ Սարթոյի վիճակե-
ցաւ Սալցանոյի ժողովրդապետութիւնը, որ
ամենակարեւորն էր՝ թէ՛ բազմամարդ ըլլա-
լուն եւ թէ՛ վարչութեան տեսակէտով ու-
նեցած կարեւորութեան պատճառաւ: Ուստի
1867 Մայիս 21ին ժողովրդապետ ընտրուե-
լով եւ կարգուելով, Յովսէփ Սարթօ քահա-
նան Թումպոյոյէն գնաց ի Սալցանօ, ուոյն
տարուոյ Յուլիս 13ին:

(*) Տես թիւ 170. էջ 676:

Սալցանո գեղեցիկ դիրք մը ունի շրջապատուած գեղածիծաղ վիղլաներէ եւ բուրաստաններէ: Իր բնակիչներուն մեծ մասը լաւ կրթուած են ու դաստիարակուած:

Քահանայական գործունէութիւնը հոս ալ կը նմանէր Թոմպոլոյի. եւ կարելի է՝ քիչ մը աւելի մեծ գծուարութիւններով լեցուն, ուրովհետեւ Սալցանո շատ ընդարձակ ժողովրդագրատութիւն մըն էր եւ կը բովանդակէր չուրջ հինգ հազար ժողովուրդ, որոնց հովիւ կ'ըլլար մեր գիւցաղնը: Երկու մասորանապետ օգնականներ միայն ունէր, եւ իր տան հոգատարութեան համար ալ երկու քոյրերը հեար եկած էին:

Իր խնամոցը յանձնուած ամբողջ ժողովուրդը դեռ այսօր սքանչանալով կը յիշեն իր ազնիւ նիստուկացը, այն իր քաղցր ու հանգարտ աշուրները, այն իր սիրուն եւ թելադրող խօսքը. անոնք լիաբերան կը գովաբանեն իր քահանայական եռանդը, իր պաշտօնին գործադրութեան մէջ անխնայ ջանքերը, իր ճարտարախօսութիւնը եւ զինքը համակող սիրազեղ ոգին: Տեղական եկեղեցւոյն մէջ շատ կարեւոր նորոգութիւններ ըրաւ. վիճակահանութեան մը արդիւնքով նոր Ճանապարհ Խաչի մը գնեց. վերանորոգեց Ս. Հաղորդութեան Եղբայրութիւնը որ ինկած էր:

Նոյն իսկ իր ժողովրդագրատութեան սահմաններէն դուրս մեծ փափաքով կը ցանկային լսել իր քարոզութիւնը: Քարոզեց նաեւ ի Թրէվիզօ, եւ քահանայից Ս. Կրթութիւն տուաւ ի Վենետիկ եւ ի Քաղալ Մօնֆէրրաթօ: Բայց իր ուշադրութիւնը գլխաւորաբար դռնած էր իր հօտին: Անոնց համար ամէն բանի կը հանդուրժէր, որքան ալ տաժանելի ըլլար. չէր խնայեր սեւէ գոհողութեան:

«Անգաւ մը, այսպէս կը պատմէ իր ազգականը եղող աւանդապահը որ երեսուն տարիէ աւելի այդ պաշտօնին մէջ մնացած է, — անգաւ մը մեռել մը պիտի վերցնէինք ժողովրդագրատութեան անենեկն հեռաւոր ասիւններէ: Երբ անցեցերոյն տունը հասանք, միայն երեք մեռելակիւններ կային եւ ի դուր փնտռեցաւ չորրորդ մը: Ան ասեկ ժողովրդագրատութեան Սարթօ անկնայն հանդարտութեամբ ի ԽՈՐՈՑ ԿԱՐ-

ԴԱՅԻՆ ըսելի վերջ, իր փիլոնոսփ առաւ դազաղը միւս երեքին հետ եւ քերաւ մինչեւ եկեղեցի»:

1870ին, Վենետիկոյ գաւառին մէջ սոսկայի կերպով ճարակեցաւ ֆօլքու հիւանդութիւնը: Ժողովրդագրատ Սարթօ երկրորդ Սուրբ Կարոլոս մը եղաւ՝ բարեպաշտութեան ու քաջութեան զարմանալի ապացոյցներ տալով: Բնաւ աչքը չէր գոցեր ո՛չ գիշեր ո՛չ ցերեկ. իր ուսուելիքը կը խլէր բերնէն՝ կարօտեալներուն տալու համար. շարունակ հիւանդներուն անկողնոյն քովը կը կենար զանոնք միսթարիլու համար այն ահաւոր ու խղճալի կացութեան մէջ, Մեռելները գիշերը կը թաղէր, որպէս զի չըլլայ թէ մեռելաթաղներու անհոգութեամբ՝ ընդհանուր չարեաց վրայ աւելնար նաեւ սրբապղծութիւն: Օր մը անոնցմէ մէկը զինովցած վիճակի մէջ կը պատրաստուէր իր այս պաշտօնին. քահանան վեհօրէն սրտմտած. վառուց զանի ըսելով. «Գնա՛, դու անաւթան ես այս պաշտօնին»:

Հոգւոյ փրկութեան գործին՝ թոյլ կու տար օգնելուն՝ նաեւ այլադաւաններու, որոնց նուազապէս կը չէր մերժեր: Ուստի լաւ յարաբերութեան մէջ էր Եսպուր հրեային հետ որ ամառները կ'անցընէր Սալցանոյ մէջ, ուր երեք հարիւր գործաւորուհիներ կ'աշխատեցնէր իր կերպասի գործատան մէջ, Երբ առաջին անգամ նա իր տունը հրաւիրեց ժողովրդագրատը, նա գնաց հոն՝ նախապէս ստանալով մեծաւորաց հրամանը: Ապա ստէպ կը խորհրդակցէր գործարանատիրոջ հետ՝ գործաւորուհեաց կրօնական պէտքերը լրացնելու համար, այնչափ որ եթէ ասոնք պատարագի չգային, գործէն կը վտարուէին: Այսքան հոգածու էր իր զաւակաց հոգեւոր բարիքին համար:

Ընկերային հարցերու մէջ եւս փալկեցաւ Սարթոյին վառ ու բարբոք եռանդը: Թէպէտ եւ հարուստները անտես չէր ընել եւ չէր արհամարհեր, եւ չէր դժկամակեր սեղանակից ըլլալու նաեւ գիւղապնացութեան եկող այն ունեւորներուն՝ որոնք ամառանոցներ ունէին անոր ժողովրդագրատութեան սահ-

մաններուն մէջ, սակայն և այնպէս իր սիր-
տը կը միտէր կը ղեկուր ղէպի կարօտեալ-
ներն ու անժառանգները: Սալցանոյի աւա-
զերէջ ըլլալէն ի վեր իրեն բան գործ ըրաւ
ծագկեցնել «գիւղական անտուկները» որոնք
այնքան օգտակար եղան գիւղերու բնակիչ-
ներուն, և զոր ապա ա՛յնքան պաշտպանեց
Պատրիարք ըլլալէն վերջը:

Իր եղբայրսիրտ թիւնը՝ սր բնաւ չէր խու-
սափեր որ եւ իցէ՝ զոհողութենէ, երբեմն
զինքն կը մղէր խոհմութեան սահմաններէն
խակ անդին: Վերջին կարօտութեան հասած
ընտանիքի մը օգնելու համար օր մը ծախած
էր իր ձին, և գրուի զրած զոհարազարդ
ժողովրդապետական մատանին զոր իր նա-
խորդներէն մին գնած էր, զոր հազիւ կըր-
ցաւ ազատել երբ ժողովրդապետութենէն
մնկեցաւ: Ժողովրդապետ Րօզայէն թողուած
զրամագլուխով բարեգործութիւն մը հիմնեց
Սալցանոյի ստաներեք աղջիկներու օժիտը
հոգալու դիտմամբ: Իր նախորդը՝ Ալէկըի, հի-
ւանդանոց մը հիմնած էր, բայց եկամուտները
անբաւական էին: հիմա բարի ժողովրդապետ
Սարթօ մէկէն խոշոր փոխառութիւն մը ըրաւ
և այն հաստատութեան կեանքը ապահովեց:
Բայց Թրէվիդոյի եպիսկոպոսը այս անգամ
սիրալիբ կերպով յանդիմանեց զինքն և հար-
ցուց թէ արդեօք միտք ունէ՞ր բուրվառն ալ
զրաւի դնելու:

Այս դժուարութիւններէն ազատելու
համար պէտք եղաւ երիտասարդ քահանան
հեռացնել այդ միջավայրէն, ուր մինչեւ այն
ատեն ա՛յնքան օրինակելի եռանդով անձնա-
զոհ աշխատած էր ի փրկութիւն հոգեոց, ուս-
տի տեղափոխուեցաւ:

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ (*)

Օ Ն Ո Ւ Ն Ճ Հ Պ Ա Պ

Յիսուս Քրիստոսըն Ալլախըրը զապուլ
օլունմաօրըր բագօիթէ արբըզ կէօյթէ
վէ եէրէէ հիչ պիր շէյէ պիր մանա
վէրիլէմէզ:

(Տեվաւի)

Յագաթ աճէպա հագիգաթըն իսմինի օլ-
սուն էյիճէ թէլէֆֆիւզ իթմէյէ ճէսարէթիմ
վա՛ր մը տըր: Հագիգաթ նէ՞ տիր, հագիգաթ
նէ՞րէտէ տիր: Թարիխին նէ՞րէսինտէ տիր:
Շայէտ Յիսուս Քրիստոսա ինանմալաճազ օ-
լուրան, եա քիմէ՞ ինանմալազսն, Չէզարա՞
մը, Իսկէնտէրէ՞ մի, եօզաա Սօզրաթա՞ մը:
«Սօզրաթըն էֆալը Յիսուս Քրիստոսունքի
գատար վիւսուգա մալիք օլմատըրը հալտէ,
եինէ տէ քիմաէ օնուն հագիլընտա շիւսիէ
իթմէյօր, Հագիգաթ մէղհէպին նէ՞րէսինտէ
տիր: Քրիսթիանըզ պիր եալանճըլըզ տէյօր-
սըն, օլսուն: Յագաթ էյէր քրիսթիանըզ
պիր եալանճըլըզ իսէ, պիւթըրէսթիլին,
պուտիսմին վէ պէնզէրլէրին եալանճըլըզ օլ-
տուղընա արթըզ հիչ շիւսիէ իտիլէմէզ: Պէ-
չէրիլէթին մէղհէպէ տայիր օլան խագիինէյի
էվրագընտա, եէկտիկէրինի թէվալի էյլէյէն
եանլըշըղարտան մատա պիր շէյ եօզ տըր
վէ ինսանլարըն հիսս իթտիլի էն մուգատ-
տէն պիր սուշսըլըզ վարաա, • տա պիր
տուղադտան պաշգա պիր շէյ տէյիլ տիր:
Թապիի մէղհէպ վար տըր, տէյէճէքսին: Յա-
գաթ թապիի մէղհէպին իչինտէ, Յիսուս
Քրիստոսըն ալլալըլը գատար տէրին վէ մէ-
թին էսաալար իւզէրինէ պինա իտիլմիշ, պիր
թէք պիր տանէ օլսուն, պիր թալիմաթ վա՛ր
մը տըր, պիր մատտէ վա՛ր մը տըր: Ալլահա
բէրէսթիշ իթմէլի, ծնա սէճտէ դըլմալը, տէ-
յօրսըն, Նիչի՛ն, Չիւնքի սայիգայը Փըթրի-
յէմիզ պէօյլէ իսթէյօր, պէչէրիյէթ պէօյլէ
էօյրէտիյօր: Օն սէքիզ ասրտան պէրի պէ-
չէրիյէթ, Յիսուս Քրիստոսա տա սէճտէ իթ-
մէլի օլտուղընը թաստիք էյլէյօր: Շու հալտէ
թէքրար սօրարըմ. հագիգաթ նէ՞րէտէ տիր:

(*) Տե՛ս թիւ 471, էջ 694:

Յեւէֆէնին, իւմի ախլէազըն, հուգուզըն, իգթիսապը սիյասինին նէրէսինտէ տիր: Հազզը թէսարրուֆ վար օլտուղընը վէ սէմէրէյի ֆուալիյէթինի պիր տիկէրէ նազլ իթմէք ճայիզ պուլընտըղընը դասպուլ իտիօրսուսն, վէ հէմ տէ պու ֆիքրին սօղրու տըր: Ֆազաթ հէյէթի իճթիմաիյէնին էսասը օլան պու պէօյիւք վազաա, Յիսուս Բրիստոսըն ալլահըղընտան տահա զլյատէ քէսիր, սահին, լաեիւթէզէլզիլ վէ հազզի պիր ըհանլար իւզէրինէ միւպթէնի տէյիլ տիր: Յիսուս Բրիստոսըն Ալլահըղըն սահին տէյիլտէ միւս պէրհէն տէյիլտէ, տիւնեասա արթըզ սահին, միւպէրհէն հիւ պիր շէյ հօգ տէմէք տիր: Յիսուս Բրիստոսըն թախթը իլահիյէթինի տէվիրէն էլ, խահ նա խահ, Ալլահըն թախթը ճէլալըն տէվիրմիշ օլաճագ տըր: Չիւնքի, պու սուրէթլէ տէմէք օլույօր քի, ձէնապը Հազզ քէնտի թախթը իլահիսինտէն, հալանճըղըն իհրազը զալէպէ, շէրլին քէսապը ֆիսթուհաթ էյլէտիյինի, պիր ֆէրտի աֆէրիտէնին քէնտի քէնտիսինէ Ալլահըղըն սիֆաթընը միւզաֆ զըլտըղընը վէ պու հալանճը ալլահըն գարշընտա տիւնեանըն մէֆթուսն վէ մէպիութ գալտըղընը օնըն ալազլարընա տիւշէրէք սէճտէ ու իսպտէթտէ պուլընտըղընը կէօրմիւշ վէ պու աշվալէ միւս սաատէ էյլէմիշ օլաճագ տըր: Պուստան մասա, պու կիպի պիր պիւթէրէսթիւք իչինտէ հուվարլանան տիւնեանըն տահա զիյաստէ պօղուլաճագ եէրտէ, պիլ աքո, օ սալէտէ թէճէտաիւտ իթմէսինէ տէ միւսասատէ էյլէմիշ տիր: Պէօյլէ պիր մէզպէլէյի քէրիհէ իւզէրինտէ էն նէֆիս չիչէքլէրին աշըմասընը մէնն իթմէմիշ տիր: Պէշէրիյէթի, հազիգաթը զէլալէթտէն թէֆրիք իթմէք խուսուսընտա ասիւմ իւլ էմքեան պիր հալտէ պրազմըն տըր: Ղիրա, հանլըչըզ, հալանճըղը վէ պիւթէրէսթիւքտէն պաշգա պիր շէյ օլմայան քրիսթիանըզ, մահաուլտար, խալրխահ պիր շիւլէյի նուրանի իլէ զըյարաշ օլմազտա օլտուղընը ձէնապը Հազզ կէօրմիւշ վէ պու հալէ չարէսագ օլմագ իւզրէ օ գաւալը պէշէրիյէթէ պիր հէտի մէտէտա քեարի ուզաթմամըն տըր:

Ալլահիւմէ՛, Ալլահիւմէ՛, թէհիյէ պուսուրտըղըն նուրը գապուլտան իմթինա էյլէյէն ֆիքրի ինսան, նէ՛ միւտիշ կիրտապուլարա, նէ՛ կիպի իչինտէն չըզըլմագ չուքուլարա հուվարլանըն կիտէր, վէ հազիգաթըն սէվիպ տէ օնսուզ եաշայամայաճաղընը հիւս իտէճէք օլուրսա, նէ՛ գատար էնտիշնագ օլուր: Չուլմէթ արասընտա սուլաշմագտան, հալլի միւմքինսիզ պին պիր տիւրիւ ֆարզիյաթլարա ուզրաշ հագտան պիթապ գալմը, թէճրիպէլէրին էն ալըրընա եանի կէօղլէրինի գարամագ վէ արթըզ կէօրմիւշ պիլէ իսթէմէմէք թէճրիպէսինէ կիրիֆթար օլուր: Պէօյլէ պիհուզուր սուրէթտէ եաթտըղըն հասաղընըն վէ քէշմէքէլէր արասընտա չըրըրնան ճանընըն էթրաֆընտա գարանըզ րուհը օլան սաուլըն ճան ուլանըզ տուրօ մուշ տըր, օ՝ ուլգուսըզ կէչիւրաիյի տէմէրտէ շէօյլէճէ պիր սէս իշիաիլիր: «Պրա՛յ պու մէսէլէլէրի, թէ՛րք էթ չու թէթէպպիւսաթընը, կէօղլէրինի գարա՛, հէր շէյի պիր ունո՛ւթ տա ուլումանա պագ» եա՛ Յիսուս, պու միւզսարըզ րուհլարա մէրհամէթ էյլէ: հազիգաթը արայան պու նէճիպ գալալէրէ աճը՛ն: Պուսլար նուրտան գաշմամըն, գարանըղըն արզու իթմէմիշ տիրէր: Վէլէլ արզու իթմիշ պիլէ օլալար, սէնին գալպինին մէհապպէթի օնլարը մաղլուպ իթմէլի տիր: Սէնին տէլինմիշ էլլէրինտէն վէ ալազլարընտան, աշըմըն գալպինտէն պիր շիւլէ կէօնտէր, գաիֆ տէ օլսա գարարըն հօգ: Ահ, Յիսուս, օ շիւլէ սայէսինտէ, պու րուհլար սէնի պիր կէօրսիւնլէր: իշթէ օ վազըթ խէլաս պուլաճագ տըրլար: Չիւնքի թէսիս իթտիյին մէզհէպին հազիգաթընա էն ճէլիլ վէ էն գաթի տէլիլ սէն սին, վէ, էն մուզլիմ ֆիքրիլէրի թէնվիր վէ էն մարիզ գալպլէրի շիֆաբէզլիր իթմէք իչուսն օնլարա Յիսուս Բրիստոսը կէօթէրմէք քեաֆի տիր:

Է Ն Ճ Ա Ս

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈՂԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՍԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՒ՝ ԳՐԲԷՆ

ԳՐԲԷՆ Ա. — ԳՐ. Ի. Ի. — ԴԱՏԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՅԿԱՅ ՎԵՐՏԻԺ-
ՈՒՆԵՐՈՒ ՎՐԱՅ:

Ամեն քանի մէջ դիտե՛ք վախճանը, եւ թէ ի՞նչպէս
պիտի կենաս աւայտոս դասաւորին առջեւ, որուն ծա-
ծուկ քան մը չկայ, որ պարգեւներով չ'ողորմէր եւ ոչ
կ'ընդունէր ջասագովաւորին եւ անմեղադրութիւն, այլ
պիտի դատէ արդարաւանք:

Ո՛վ ամենաբարեւոտ ու անմիտ մեղաւոր, ի՞նչ պիտի
պատահասանես Աստուծոյ, որ գործած քոյոր յարիճներդ
գիտէ. որո՛նք որ երբեմն քաղցած մարդու մը դիմեմք
կը սարսափիս:

Ինչո՞ւ առաջունէ ինչ պատասխանիդ դատաստանի
օրուն, յորում ոչ ոք պիտի կարենայ արդարանայ կամ
պաշտպանուիլ ռաբիշին միջնորդութեամբ, այլ իւրաքանչիւր
ոք թաւախան ծանր թեւ պիտի ըլլայ իր իսկ ան-
միտ:

Հիմա հու աշխատանքիդ պօղարքեր է, շացի՛ ընկու-
նիդի, ճեմութիւնդ՝ շեմիդ, ցաւդ՝ հաւիդ ու արքաւոր:

ՍՈՒՐԻ՝ ԲԵՆՆԱՐԴՈՍ. ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Բեռնարդոս՝ որ քաններեք տարեկան էր, Սի-
դոյի Ստեփանն արքային կողմէ սիրալիւր ընդունելու-
թիւն մը գտնելով, իր նորընծայական կեանքը սկսաւ
ա՛յնքան մեծ եռանդով և առաքելութեան մէջ ա-
ռաջ երթալու ա՛յնքան բուռն փափաքով, որ կար-
ծես սկսնակ չէր, այլ ներքին կեանքի մէջ վարժ և
կրթ ծերունի մը: Միշտ կը մտածէր աշխարհէ հեռանալու
ու իթները որ մշած էին զինքը շախարհէ հեռանալու
եւ հեղաթեւան մէջ ինչապէս համար յաճախ կը
կրկնէր սա խօսքը. Բե՛ռնարդոս, Բե՛ռնարդոս, ինչո՞ւ
համար այստեղ եկար: Ամենամեծ խտուածեամբ կը
մահացնէր իր զգայարանքները, որոնցմէ կը մանեն
երկրաւոր բաղձնաքնները: Քաղաքական և արտաքին
յարաբերութեանց մէջ մի միայն հնազանդութեան
և ընկերսիրութեան համար կը մտնէր, ան ալ զգու-
շութեամբ և ամփոփմամբ որ չըլլայ թէ մտածականի
ստեղծ արտաքին երբեք զինքը զբաղեցնէին կամ վրդո-
վեն: Ամբողջ տարի մը նորընծայից ննջարանին մէջ
անցընելէ յետոյ, երբ անկէ ելաւ դեռ եւս չէր գիտէր
թէ անոր տանիքը տոխոտակամա՛ծ էր թէ լոկ կզմինս
արով ծածկուած, եւ թէ եւ հազար տեղամ եկեղե-
ցին մտած ելած էր, բայց կը կարծէր թէ ան միայն
մէկ պատահան ունի ծայրի կողմը, և չէր դիտած
այն երկու պատահանները որ իրեն լոյս կուտային:

Գլեթվոյի արքայ եղած միջոցին վաղք մտնել ու-
զողներուն սովոր էր ըսել. Պէ՛տ է որ ձեր մարմինը ա-
խարհի մէջ թողուք, մի միայն ձեր հոգին վաճաճ բերէ:
Ինքը թէ և իր մարմինը վաճաճ գունդն գուրս չէր ձգած,
բայց հսկեց, ծամապահեց, տպրեցաւ հոգեւորապէս
իրեն թէ մարմին չունենար: Իր ստամոքսը ա՛յնքան
տկարացուց որ ամբողջ կեանքին մէջ ցաւ կրեց: Մեծ
հաճոյքով կը կարգար Սուրբ Գրքը, և յաճախ ա-
ռաջ մեկնութեան գրքի: Ասով աշխատեց ընտելացաւ
անոր խօսքերուն որ իր քարոզներուն, ճառերուն և
նամակներուն մէջ գրեթէ միշտ անոր բացատրութիւն-
ներովը կ'արտայայտուէր, և սքանչելի կերպով զա-
նաւ իրարու կը յարէր շղթայաշար, ինչպէս հիաց-
մամբ կը տեսնէիք երբ իր գրուածքները կարդանք:

Սուրբ Բեռնարդոս աշխատեց հիանալի կեանքով
տպրեցաւ Սիդոյի մէջ երկու տարի 1113—1115: Նոյն
միջոցին Ս. Ստեփանն արքային աղաչեցին որ նոր վաճաճ
մը հիմնէ Գլեթվոյի մէջ, որ աշխատեն անտառով
ծածկուած հովիտ մըն էր: Այս Բեռնարդին համար
ընտրեց նա Բեռնարդոսը, անոր եղբայրները և ուրիշ մի
քանի եռանդուն կրօնաւորներ: Եւ թէ եւ մեր Սուրբը
դեռ 25 տարուան էր, և իր ընկերները շատ աւելի
տարեքով էին և միանգամայն աշխարհի գործերուն
մէջ աւելի փորձ և վարժ, բայց արքան զանիկայ ա-
նոց վաճառհայր անուանեց, երբ եկան իր օրհնու-
թիւնը աւանդու: Չայս ըրաւ անշուշտ Աստուծոյ
ներշնչութեամբ, որ կ'ուզէր փառաւորուիլ իւր ծառային
ձեռքով: Այս հիմնարկութեան սկզբնաւորութիւնն
ները շատ դժուար կ'ըլլան: Հոն աղքատութիւնը շա-
փէն աւելի էր. անօթութիւնը, ցաւար և մեղկու-
թիւնը անոր բնակիչներուն ամբողջ հարստութիւններն
էին: Իրենց ապարը շատ անգամ ուփնի (hêtre) տե-
րեւէ կը պատրաստէին: Հացերին Մարգարէինն պէս,
գարեւէ, կորեկէ և վիգէ էր, ան ալ ըստ բնականի
չունէին. վերջապէս աշխատեց ան էր և ուշքուն ան-
համ, որ անցորդ կրօնաւոր մը, զայն տեսնելով՝ չկրցաւ
արցունքը բռնել և գաղտուկ անկէ կտոր մը առաւ,
որպէս զի տանի ամէնուն ցոյց տայ իրեն նշան զայն
ուսողներուն ճգնութեան և իրեն գրգռեալ ապաշխա-
տութեան: Այն աստիճան կարօտութեան մէջ ինկան,
որ վաճաճ տեսնէր (Բեռնարդոսի ժերար եղբայրը)
ստիպուեցաւ Սուրբին յայտարարելու թէ չպիտի կա-
րենայ առաջիկայ ձմեռն, կրօնաւորներու պիտոյքները
հոգալ: Բեռնարդոս հարցուց թէ ո՛րքան դրամ պէտք
է: Տեսնեք պատասխանեց թէ 11 ոսկի: — Արթընն
ուրեմն, ըսաւ Սուրբը, որ Աստուծոյ բարութիւնը հա-
ծի մեզի այս գումարը իրեն: — Նոյն վայրկեան իսկ
աղօթքի սկսուեց և հազիւ իր մաքուր ձեռքերը եր-
կինք ուղղեց, Շաղի, յոյցի կին մը եկաւ զինքը տես-
նելու և իրեն 12 ոսկի ընծայ ըրաւ, աղաչելով որ իր
մահամերձ ամուսնին համար աղօթքներ ընել տայ
կրօնաւորներուն: Սուրբը գոհութիւն մատուց Աս-
տուծոյ այս ողորմութեան համար, և գոտահացուց
կինը որ ըստբովին աւարջացած պիտի գտնէ իր ամուս-

սինքն, իրօք ալ կինը ողջ առողջ վիճակի մէջ գտաւ իր ամուսինը: Սուրբ Բեռնարդոս շատ անգամ արտատակարար և հրաշալի օգնութիւններ ընդունած է: Ուրովհետեւ Աստուած իրեն հետ էր և միշտ իրեն կը հայթայթէր, անակնկալ և անյուսալի միջոցներով, ինչ որ պէտք էր իր վանքին պահպանութեան համար: (Շարունակելի)

Հին Վստերաթուղթեր

Օ Ր Ա Պ Ի Ր

ՄԵԾ ՀԱԼԱԾԱՆՔԻՆ

ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷՍՑ ԴԷՄ

(1827 — 1830)

18 Կիր. — Բռքնիքցիներուն իսկին տուաւ տէրութիւնը Պէյ օղլու երթալու ու տուներնին ալ չի ծախուեցաւ:

Աս բանն ալ մեծ տէրտ եղաւ Հայոց, զէրէ մէկ ճամբայ մը բացուեցաւ տէյի, ամէն մարդ ալ աղքատներէն որը Հալէպցի ենք, որը Բռքնիքցի ենք ըսելով մէյ մէկ երկերկու պօղչայով միշտ անդադար կը փախչէին Պէյ օղլու: Հայք վախցնենք Քաթօլիքներուն աչքը տէյի շատ մանտրը մունտրը բաներ ըրին քի չերթան Պէյ օղլու, բայց ճար չեղաւ ինչ որ ըրինէ հետս հետէ կ'երթային:

Հայք գաղտուկ տուգալս խուրմիշ ըրին Քաթօլիքները չիմանան տէյի, սապէս գարձուցին. օր մը Պեղճեան Յարութիւնը կանչեց քանի մը մարդ ժամ գացողներէն ու ըսաւ. Սիւրկիւն եղող մարդիկներէն շատ թուղթեր կուգայ կոր տեղերնուն օգը քէշ ըլլալուն պատճառաւ, ու նաեւ մարդ ալ կը մնանի կոր, մեղք են. գացէ՛ք թասհի՛ք ըրէք որոնց եղած տեղին օղը քէշ է նէ անունովը տէֆտերը բերէք քի տեղերնին փոխենք. գացողները փէք աղէկ ըսին, ու սկսան գրելու. բայց միտքը աս չէր, չարութիւն էր. կ'ուզէին Հայք աս հալտտիսը ըլլայ քի ըրածնին չիմացուի. տէֆտերը գրեցին տարին իրեն նէ, վերէն ի վար վըլաց գացողները ըսելով. Ես ձեզի գաղտուկ բան մը ըսի՝

պէտք էր քի աս բանս՝ թեւաթուր ընէիք. թեւաթուր ըլլալուն համար չըլար կոր ըսաւ ճամբեց:

Բայց մինք իմացանք ինչ ըլլալը, այս ձեւով գաղտուկ շատ ջանացին Հայք ընդամէնը Քաթօլիքներուն քչի տէյի յետոյ ըսէին պիտոր քի մենք աշխատեցանք, բայց տէրութիւնը այսպէս ըրաւ. Պեղճեանը ներս հասկցնելովը, թագաւորէն խաթը գնաց դուռը խայմախամին այս ձեւով ընդ ամէնը աքսորուի տէյի, խայմախամը վախկոտ մարդ ըլլալուն շաշմիշ ըրաւ ու վախուն մազ մնաց որ կ'ըլլար. սերասքէր խոսրեֆ Մէհմետ բաշային վրայ տեղէթ նազրիութիւն ըլլալով, հարցուց ասոր սապէս սապէս բան կայ ինչ ընենք. սերասկերը ըսաւ չըլար այսպէս բան, եղածը հերիք է. խայմախամը ըսաւ ես կը վախնամ: Չէր կրնար արքային աս բանիս վրայօք բան ըսել. յետոյ սերասկերը կ'ըսէ. Չըլլար պս բանը դու աուր ինծի արքայէն եկած թուղթը ես կ'երթամ կը խօսիմ: Աս միջոցիս մէջ Սարտէնիայի դեսպանը աս բանս իմանալով սերասկերին խապար կը խտրէ աս բանիս վրայ ըսելով, չըլլայ քի աս բանս ըլլայ տէյի: Առաւ թուղթը քնաց Բամիս յիֆթլիյն, որ թագաւորը պատերազմի պատճառաւ հոն էր, ինչ ըսաւ ինչ չըսաւ միքս ընել տուաւ աս բանս, Քաթօլիքները աղատեցան աս բանէս. Հայք աս բանէս ալ պաղ ինկան, յետոյ մէյմընալ աշխատեցան բայց չեղաւ:

Աս հալածանքին հետ միատեղ, Հայք ալ Ստամպուլու եկեղեցին սկսան շինել, զէրէ ֆըրսանթ էր կրնանք ըսել ամէնքս ալ որ մինչեւ հիմայ այսպէս եկեղեցի չէր շինուած հիչ մէկ ազգի մէջ, քովէ քով երեք մեծ ժամ, ամէն մէկ ժամին արան տաաներկու արշըն ճամբու պէս վրան թօնօղլու, ասոնք ալ ժամի պէս կրնան դործածել, որ կը սեպուի հինգ ժամ քովէ քով քեալկիր, դուրսի էթրաֆի պատերը նմանապէս հաստը քեալկիր ու բարձր, ժամին առջեւը քեալկիր մեծ Պատրիարքարան մը մէջը մեծ իլիմուլուի, բաղնիք ու նաեւ հացի ֆուրուն ալ ժամուրուն ու Պատրիարքարանին տակը բոլոր

մահաններ, կրնանք ըսել որ Խում խաբու-
յին երեք բային մէկը աս եկեղեցիին տեղն
է. մեծ հավուզներ մէջը ջրով լեցուն կրակի
պատճառաւ, իբթիզա եղած ժամանակը
խուլլանմիշ ըլլելի տէյի. թող մէջի եալոր-
դէ ու բայտէ եղած զարդարանքները, ժա-
մուն մէջի թախըմը, այսինքն սպեաններ,
բանուած շապիկներ, արծաթ խաչեր, կան-
թեղներ, բուրձառներ, քշոցներ, արծաթ
խաբլը աւետարաններ, տահա ուրիշ շատ
թիւրիւ բաներ քի հաստը հիսապը չիկայ,
սըրմա, թել, բուլ, թըրթըր, հւն. եւն. :

Պատրիարքին զատ պատարագի թագըմ
մը բանուած, սգեստը սըրմայով ու մարքը-
տով, չաթալ թաք մը սըրմայով ու օրթան
և թաքին գուլըն էլմասէ խաչեր գրուած,
զաւազանին գուլըն ու ողաթափին վրայ
էլմաս խաչ. քեզի կը թողում գնա մտածէ
խուսուրն ալ ասկէց. Օրթաքէօյի ժամին
համար ալ տաաներկու բանուած ծանտը
շապիկներ, արծաթ խաչեր, աւետարաններ,
եւն. սալթ աս թախըմներուն հազար քսէ
ստակէն էլէլ գնաց տէյի թամին կ'ըլլուի
կոր, թող թէ ժամուն շինուածը :

Այս բանս ընել առողը ու շինել տուողը
կրնամ ըսել որ Պեղծեան Յարութիւնն էր,
աս մարդս չըլլար նէ բոլոր ազգը միատեղ
գար նէ կարող չէին ըլլար մէկ չէյրէկը շին-
ուէր. ասոր ստակովը և նուֆուսովը շին-
ուեցան և օրթա ժամին ներս մանալու դասն
վրայի գրուած ոտմաւորը Պեղծեանին հա-
մար էր շինուած, որ ինք գնել տուաւ. իր
անունը աշիքեար չիկայ, բայց կարթացողը
կրնայ զօրութեամբ իմանալու որո՞ւ համար
շինուէր է աս գիրը, վասն յիշատակի հա-
մար :

Բոլոր ամէն ազգ ու բոլոր տէրութիւնը
աս բաներուն կը նայէին, մարդ կարող չէր
բան մը ըսելու, ամէն մարդ կը վախնային
և մեծով պզտիկով բանին վերջը կսպասէին :

Քեզի ալ տահա զօրաւոր գործը պատ-
մեմ. շինուած ժամուն մեկին աւագ խորանը
սուրը յարութեան սլաակերք դնել տուաւ
իրեն անուանը խորանը կոչուելու, թագա-
ւորէն տերութեան դուռը հաստ եկաւ քի

Հայոց եկեղեցիին մէջ Յարութեան անուամբ
շինուած կողմը, հրաման արուի Յարութիւնը
իրեն համար թիւրիպէ այսինքն, գերեզման
չինէ տէյի. դռնէն ալ ֆէրման եկաւ Պեղ-
ծեանին քի գերեզմանը շինուի. սկսան
Սուրբ Յարութեան խորանին առջեւ գերեզ-
մանը շինել սալ ու ալ շինուեցաւ. բոլոր
աշխարհք աս բանին զարմացան :

Հիմա ո՞վ կարթացող, ինծի ըսես պիտոր
քի Հալէթ էֆ.ն ալ այսպէս գերեզմանը ող-
ջութեանը շինել տուաւ, բայց արծաթի չե-
ղաւ մէջը պառկելու. պատասխան. սպասէ
վերջը նայէ. նայիք աս ինչպէս կ'ըլլայ :

26 Բշ. — Վերը ըսինք քի Զօթրօթային
հետ Միսկէի Մկրտիչն ալ գնաց տէյի. ժամ-
կոց մը կուգայ, Միսկէի Մկրտիչը խանութէն
կ'առնէ կը տանի Պատրիարքարանը, և կը
հարցնեն թէ դու որո՞ւ հրամանաւ Պէյ օղլու
գացիր կ'ըսէ, ան ալ Սուլթանին հրամա-
նաւը. Պատրիարքը կ'ըսէ սըրթողելով, ես
քեզ մաղազային մէջը մահպուս ընեմ տէ,
թող գայ Սուլթանը ազատէ. տարէ՛ք կ'ըսէ.
կը տանին մաղազային մէջ մահպուս կ'ընեն :

3 Դեկտեմբեր Բշ. — Պէյ օղլուի մահալլէ
քէհասին, պախալի խըյաֆէթով թէպալի,
և Վօյսօտային մանուրի մնալ միատեղ
կ'երթան Զօթրօթային տունը դուռը կը չա-
լեն. կը բանայ դուռը, վար կը կանչեն աս,
ան ալ չի գիտնալով վար կ'իջնայ, ինչ կ'ու-
գէք ըսելով. կ'ուգեն բռնել ու դուրս քաշել
ֆէրաճէսիդ ըէզալէթով. ինչ խըտար ծան
ունի նէ կը կանչէ քի ֆէրաճէսիդ ուր կը
տանիք. ալապզի կնկալի վար կը թափին,
թող չեն ի տար քի ֆէրաճէսիդ ուր կը տա-
նիք. Հիւլասա ֆէրաճէն կը հաղցնեն, կ'առ-
նէ մահալլէի ճինան յիտակ Պատրիարքարանը
կը տանի. հոն կը պահեն. չիւնքի աս մի-
ջոցիս մէջ սիւրկիւն չիկար, և խօշալութիւն
ալ չէր ըլլար կոր. աս աղջկանը և Միսկէին
վրայ քէշ իֆթիրա քըսելով աս ձեւով պիտի
աքսորէին. և աս քրտած քիրերնին Սուլ-
թանին ալ կը դաչեր, ասով Սուլթանն ալ
խորքաւանմը պիտոր ըլլար եթէ յաջողեր նէ :

4 Դշ. — Սուլթանը որ լսեց քի իր իշճին
վերուցիր են առաջուց ալ դիտէր քի աս

կնկանը Հայերը ոխ ունէին, անիտէ պուշ-
րուլթու մը տէրութեան դուռը խալախա-
մին խաւրեց պալթածիյով մը ըսելով թէ աս
մարդիկը մութլախ կ'ուզեմ: Դուռը աս բա-
նիս վրայ ալթ իւստ եղաւ, նայեցանք քի
դուռը չիկայ այսպէս մարդիկ: Սուլթանին
թախրիր ըրին թէ չիկայ:

5 ԴՆ.— Կրկին Սուլթանը դռան պալթա-
ծի մը կը խաւրէ ըսելով: մութլախ աս մար-
դիկը կ'ուզեմ, նմանապէս խաւտան բաշային
ալ էյէր չեն դանար, և չեն ի տար նէ, եղ-
բօրս, այսինքն թաղաւորին արզ կ'ընեմ և
կ'երթամ ալ: աս խապարը որ գնաց դուռը
կրկին ալթ իւսթ եղան ընտուել տուին դռան
բանտերուն մէջ, չի դռան այսպէս մարդիկ:
Իսկոյն Պատրիարքին մարդ խաւրեցին թէ
այսպէս մարդ մը իր քովը կայ նէ պահած
կամ մահպուս ըրած, շուտով թող տայ,
Սուլթանը կ'ուզէ կոր: Պատրիարքը կ'ըսէ
իմ քովս այսպէս մարդ չիկայ, պալթածիին
դռնեն կ'ըսենք քի չի կայ այսպէս մարդ:

6 ԵՂ.— Սուլթանը թէրէճէսիզ կը բար-
կանայ զէրէ գիտէ քի հայք են աս բաներս
ընողները: Անիտէ պալթածի մը կը խաւրէ
Պէյօղլու թառիւր ընէ քի ո'վ ան օրը աս աղ-
ջիկը վերուցեր է: Կ'իմանայ քի մանսուրի մը
Վօյլօտայի խօնախէն դացեր է: Կ'երթայ
Վօյլօտային խօնախը, մանսուրիէն կը հաս-
կընայ քի չիսակ մահալլէի քննեան պատ-
րիարքարանը տարեր է:

Պատրիարքը իմացաւ որ բանը քէշի պի-
տի երթայ անիտէ միսկին ալ Զօթրթան
Իւսկիւտար անցուցին քի թէզով աքսորեն,
յետոյ ըսին քի դուք մինչեւ եկաք նէ եղած
էր:

Հոռոմայէն քանի մը անգամ ողորմութիւն
եկաւ Քօնէղիին քի ուղղափառ աղքատաց
տայ աէյի, և ան ալ մարդուն կէօրէ տուաւ:

6 ՈւՐ.— Պալթածին կ'երթայ պատրիար-
քարանը, պատրիարքին կ'ըսէ: Դու հոս չի-
կայ ըսիր: մենք թառիւր ըրինք քի հոս են
բերեր ան օրը, էկէր մեռուցիր նէ մեռած
էջը տեսնամ պիտոր, էկէր աքսորեցիր նէ
ուր աքսորեցիր տեղը ըսէ, զէրէ հրամանը
ինծի այսպէս է: Ան ասունը պատրիարքին

թարան չքանց ըսաւ քի: Հոս չեն, Իւս-
կիւտար են: անիտէ պալթածին Իւսկիւտար
կ'երթայ կը գտնայ Զօթրթան, իմամի տունն
էր: միսկին արապածի պաշիին քովն էր:
Աս բանիս մէջն իքէն: տէրութեան դռնէն
քէհեա պէյին չուխատար մը եկաւ Իւսկիւ-
տար, ամէնքն ալ կ'անէ պատրիարքարանը
կը տանի, անկից Զօթրթան թող կու տան,
պալթածին կ'անէ սուլթանին կը տանի:

Պէզնեանը սլուրկին եղած մարապետնե-
րուն համար Քօցիսնիթին ստակ խաւրեց քի
խաւրէ:

8. ՇՐ.— Կրկին պալթածին կ'երթայ պա-
տրիարքարանը: միսկին ալ սուլթանին հրա-
մանաւը կ'անէ, ան ալ աղատեցաւ:

Պօղոս չէլէպիին տեղին համար, հալան
քէշ ըլլալուն Քէօթանեաէն Այստէֆանօս բե-
րել տուին որ հոն նստի:

(Շարունակելի)

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍԷՆ

Աղիսամարտի, 15 Հոկտ. 1914

Գերապայծառ Տէր,

Տիօրէն-Խմբագրապէս Կ. Արմազանց Շաքարաքերի

Կ. Պոլիս

Կը խնդրուի որ բարեհաճիք հրատարակել Ձեր
աղբօգուտ շաքարաթերթին մէջ ներփակեալ յօդ-
ուածս նկատմամբ բացման ազգային նոր վարժա-
րանի յԱղիքսանդրիս:

Եւ կանխելով ի շնորհակալութիւն մնամ հաւատ-
տեօք մեծարանաց

Յ. Վ. ՔԱՂՈՒՆԻ

ՔԵՐԵ Ա. ՅԱՌԻՓԵԱՆ

ՆՈՐ ՎԱՐՁԱՐԱՆԻ ԲԱՅՈՒՄԵՆ ՅԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ

21 Սեպտեմբեր 1914

Եգիպտոսի Հայ-Կաթողիկէ հասարակու-
թիւնը տարիններէ ի վեր օտար միջավայրի և
կլիմայի սակ հաստատուած ըլլալով, զանա-
զան ազգերու հետ ունեցած արտաքին շրժի-
ման ու յարաբերութեան բերմամբ սկսած էր
օտարացման վտանգին ենթարկուիլ, չունե-
նալով ազգային յատուկ վարժարան մը, ուր

ազգին զաւակները կրթութիւն ու դարգանային տոնմային դաստիարակութեամբ ու հրահանգներով պահելու համար ազգային յատկանիշ նկարագիրը ու մայրենի նուիրական լեզուն :

Վարժարանի մը գոյութիւնը անհրաժեշտ պէտք մը դարձած էր յաւէտ այն տեսակէտով որ Եգիպտոսի Հայ Կաթողիկէ հասարակութիւնը Թուրքիոյ զանազան քաղաքներէ դաղթականութիւն ըլլալով, զանազան լեզու և հետեւաբար տարբեր գաղափար ու բերում սենեցող տարրերէ բաղկացած է, անոր համար պէտք ունէր ձուլման ու գաղափարի միութեան, որ միակ պայմանն է հարթել կարենալու հասարակութեան առջեւ զարգացման, ներքին կազմակերպութեան ու միօրինակ վարչութեան ամէն խոչընդոտներն ու դժուարութիւնները :

Թեմին իմաստուն վիճակաւորը, Արհի. Յովհանն եպս. Գուգեան որ իր սիրելի ժողովըրդեան բարւոյն ու յառաջդիմութեան միշտ փափաքող ու ինամածու եղած է, զգաց վարժարանի մը հաստատութեան կենսական պէտքը, և խորհեցաւ միջամուխ ըլլալ սոյն հանրօգուտ ձեռնարկին յաջողութեան, և այսպէս փայլուն ապացոյց մը տալ իր յառաջդիմական ու ազդասէր գաղափարներուն :

Սոյն համոզմամբ որոշած էր նախ օրիորդաց վարժարան մը հաստատել Աղեքսանդրիոյ մէջ մեր Ա. Յղութեան պատուական Բոյրերուն վարչութեան ու ինամակալութեան տակ. ինչու որ իգական սեռին դաստիարակութեան հարցը կարեւորագոյն զիրք մը զրուած է միշտ քաղաքակիրթ ու դարգացեալ ազգերուն քով, նկատի առնելով կնոջ ունեցած մեծ դերը ընտանեկան կեանքին մէջ :

Արդ Ամեն. և Գերերջ. Հոգեւոր Տիրոջ հաւանութեամբ մեր Ա. Յղութեան յարգոյ Մարապետաց Ընդհանուր Մեծաւոր Մայրը վերջնականապէս որոշած էր այս տարի գոհացում տալ Արհի. վիճակաւորին փափաքանաց և երկու տարուան թախանձագին խնդրանքներուն, և իրենց քաղմարդին ընկերութեան մասնաճիւղ մը բանալ յԱղեքսանդրիա, տեղական մեծաւորուհի կարգելով Ա.

Ռաք. Բոյր Գոհարինէ Սահակեանը, որ մեծ ու գնահատելի արգիւնք ունեցու սոյն վարժարանի բացման յաջողութեան :

Օգոստոս 2ին արգէն Աղեքսանդրիա հասած էին չորս ընտիր Բոյրեր իրենց համար բացուած նոր առաքելութեան փառաւոր դործքին ձեռնարկելու, ճիշդ այն ատեն, ուր Եւրոպայի հզօր տէրութիւններուն մահաբեր ու զժոխային թնդանօթները սկսած էին մարդկային հաղարաւոր կեանքեր հնձել արիւնահեղ պատերազմի զաշարին վրայ և ահ ու տարտափ սփռել բոլոր աշխարհի : Մեր արիասիրտ վիճակաւորը բնաւ չվարանեցաւ և չվհատեցաւ սոյն չարագոչակ պարագային առջեւ, այլ անդրդուելի հաստատամբութեամբ յառաջ տանել ուզեց իր ձեռնարկին գործադրութիւնը : Արգէն կանխաւ վարձուած ու պատրաստուած էր վարժարանին համար յատկացուած բնակարանը, որ է կըրկնայարկ հաստատութիւն մը քաղքին կեդրոնավայրը կառուցուած, 14 սենեակներէ բաղկացած, խիստ օգասուն, ընդարձակ ու պատշաճօրէն կահաւորուած :

Անպատմելի եղաւ ժողովրդեան ուրախութիւնը երբ ազգային շրջանակներուն տարածուեցաւ Առաք. Բոյրերուն ժամանումը յԱղեքսանդրիա, որոնց տուած ընտիր դաստիարակութեան և բարոյական կրթութեան մասին լսած համբաւը մեծ յոյս ու վստահութիւն կը ներշնչէր իրենց՝ վայելելու անոնց մեծամեծ բարիքները, անոր համար ազգայինները անխտրաբար սկսան նոր վարժարանը դիմել իրենց զաւակները արձանագրել տալու :

Սեպտեմբեր 21ին, երկուշաբթի առաւօտեան ժամը 10ին, որոշուած էր վարժարանին պաշտօնական բացումը կատարել ընդ նախագահութեամբ Արհի. վիճակաւորին, ժամանակէն քանի մը օր առաջ տեղական հայերէն, գաղղիերէն և արաբերէն լրագիրներուն մէջ հրատարակուած էր հրաւիրագիր մը՝ ուղղուած էր մեր բոլոր ազգայիններուն՝ ներկայ գտնուելու ընտանեկան սոյն անդրանիկ հանդիսին : Որոշեալ օրը ժողովրդեան խուռն բազմութիւն մը սկսած էր լեցնել

վարժարանը, այնպէս որ հանդիսին յատկացուած ընդարձակ սրահը նեղ գալով, հարկ եղաւ հանդիսականներուն մեծ մասը դուրսը, պարտէզին մէջ զետեղել։ Ամէնուն դէմքին վրայ ուրախութեան ժպիտ մը կը փայլէր։ Ժամը ճիշդ 10ն էր երբ կառքով հասաւ Արհի։ Եպիսկոպոսը, և վարժարանի դռնէն ընդունուեցաւ Յարպոյ Մեծաւոր Մօր և մի քանի աղջայիններու կողմէ, և հանդիսականներուն բուն ծափահարութիւններուն մէջ մտաւ հանդիսասրահը և բազմեցաւ։ Իրեն յատկացուած բարձրադիր գահաւորակին վրայ աջ կողմը ունենալով Աղեքսանդրիայ եպիսկոպոսական փոխանորդ Գեր. Յովսէփ Վ. Բաշունին և ձախը՝ Գեր. Յովհաննէս Վ. Ալթունճեանը։

Բարիգալուստի երգէ մը յետոյ հանդէսը սկսաւ Գեր. Բաշունի վարդապետին համառօտ մէկ ատենախօսութեամբը, որուն մէջ պարզեց հանդէսին մեծ նշանակութիւնը, որ իր մէջ կը ծրարէ ազգին մտաւորական զարգացումը, անոր գոյութիւնն ու երջանիկ ապագան։ Ի վեր հանեց սոյն դպրոցական ձեռնարկին անդուգական բարեքնները, որոնցմով Արհի. Վիճակաւորը կ'օժտէր իր ժողովուրդը և իբր երախտարիք իր եռանդուն զործունէութիւնը կ'ընծայէր յօգուտ և ի վայելումն հասարակութեան։ մաղթեց որ զուարթաբեր արշալոյս ըլլայ ան իր թեմին պայծառութեան։ Ի վերջոյ խնդրեց նորին Արհիապատուութենէն որ պաշտօնապէս հրատարակէ բացումը նոր վարժարանիս և օրհնէ զայն որ ըլլայ բուրաստան առաքինութեան և ուսման, օրհնէ նաև պատուական Բոյրերուն անձնանուէր զոհողութիւններն ու մեղուաջան աշխատութիւնները զոր ի գործ պիտի դնեն իր թեմին առաքինի և բարեկիրթ սերունդ մը հասցնելու համար։

Ապա Արհի. Վիճակաւորը ոտքի ելլելով աղբու և հայրական քաղցր խօսքերով յայտնեց նախ իր սրտին անպայման գոհունակութիւնը ու միտարարութիւնը տեսնելով իր սիրելի ժողովուրդը իր շուրջը համախմբուած, որոնք ուրախութեամբ սրտի փութացած էին իրենց ներկայութեամբը պատուելու հանդէս

ը և ձեռնարկուած գործին քաջալերութիւն ներշնչելու։ Յետոյ պարզեց թէ իր թեմին կառավարութեան ղեկն ստանձնած օրէն ի վեր սրտին միակ փափաքն էր սոյն դպրոցին գաղափարը իրականացնել, սակայն զժառանգաբար պարագաները իրեն չնպաստեցին աւելի կանուխ զայն իրադրութիւն։ Բացատրեց նաև դպրոցին անհամեմատ առաւելութիւնները, որոնք քաղաքակրթութեան ու յուսաւորութեան նոր կեանքի մը կը ծնանին աղբերը։ Գպրոցը, ըսաւ, կ'ուղղէ մարդուն բարքն ու վարքը, նա կը սորվեցնէ տգիտութեան ու մոլութեան զգուանք, իսկ գիտութեան ու բարոյական առաքինութեան սէր ու յարգ, նա կը հրահանգէ անոր միտքն ու սիրտը ճանչնալու բարին ու օգտակարը, ճշմարտն ու գեղեցիկը, ինչ որ քրիստոնէական և ընկերական պարտաւորութիւններ են, որոնք ընտանեկան կեանքի երջանկութեան աղբիւրները կը կացուցանեն։ Ապա ի վեր հանեց Ա. Յղութեան Առաք. Բոյրերուն մեր Նուիրապետութեան ընդ որ թեմերուն մատուցած անգնահատելի ծառայութիւնները, որոնք ամէն տեղ ու ամէն ատեն արդիւնաւոր ու բարեբար եղած են ազգին համար։ Ի մասնաւորի շնորհակալութիւն յայտնեց նախ Ամեն. ու Դերերջ. Թէրզեան Կաթողիկոսին և Ա. Յղութեան Բերց ընդհանսը Մեծաւոր Մօր Բոյր Պրիճիտա Եղլըքճեանի որոնք հաճեցան յօժարութեամբ իր փափաքին պատասխանել. երկրորդ՝ վարժարանիս Մեծաւոր Մօր Առաք. Բոյր Դոհարինէ Սահակեանի՝ դպրոցին յաջողութեան մասին ցոյց տուած գործունէութեան և իրեն ընծայած զօրաւոր աջակցութեան համար, և վստահութիւն յայտնեց որ անոր խոհեմապարզ կառավարութեան տակ մեծապէս պիտի յառաջդիմէ վարժարանը և պիտի իրականացնէ իր ակնկալութիւնները։ վերջապէս յորդորեց ներկայ ժողովուրդը չլլանալու Ֆեր Բոյրերուն իր բարոյական ձեռնառութիւնը և հրաւիրեց յարգելու վարժարանին կանոնները, առանց որու կարելի չէ որ հաստատութիւն մը յաջողութիւն ու զարգացում գտնէ։ Ապա գնելով նոր վարժարանը Մանուկ Յիսուսի հո-

վանաւորութեան տակ, Պահպանիչով մը խօսքը վերջացուց յայտարարելով թէ նոյն օրէն սկսեալ վարժարանը բացուած է: Երկար ծափահարութեամբ և կեցցէներով ողջունեց ժողովուրդը այս բացումը, որ իրեն համար կենդանութեան ու բարգաւաճման նոր շրջան մը կը բանար:

Այս միջոցիս Առաք. Քոյր Բէռնարդինէ Դուռնման Մեծաւոր Մօր և իր ընկերներուն կողմէ շնորհակալութիւն յայտնեց Արհի. Եպիսոպոսի որ հաճեցաւ սիրալիր ընդունելութիւն շնորհել իրենց իր թեմին մէջ, և իր հայրական խնամոյց ու հսկողութեան տակ առնուլ սոյն վարժարանը: Շնորհակալութիւն յայտնեց նաև Աղեքսանդրիոյ բարեկիրթ ժողովրդեան իրենց մասին ցոյց տուած համակիր վերաբերումին, ի մասնաւորի այն ազնիւ ծնողքներուն, որոնք յօժարած էին իրենց զաւակները անոնց դաստիարակութեան յանձնել: Ապա համառօտիւ պարզեց վարժարանին ծրագիրը և իրենց Միաբանութեան նպատակը, որ միշտ եղած է ազգին զաւակներուն յաւ կրթութիւն և խնամոտ դաստիարակութիւն տալ, և վստահացուց ժողովուրդը թէ ամէն ճիշդ ի գործ պիտի դնեն իրեն յուսալից ակնկալութիւնները պատկելու: Յիմագին ծափահարութեամբ ընդունուեցան նաև Պատուական Քրոջ սոյն անկեղծ յայտարարութիւնները:

Ամենէն յետոյ վարժարանիս առաջին գիշերօթիկ աշակերտունին՝ օրիորդ Մաթիլտ Պազալեան, զաղղիւրէն լեզուով գեղեցիկ շնորհակալութիւն մը արտասանեց, և ի նշան երախտագիտութեան փոքրիկ ծաղկեփունջ մը նուիրեց Արհի. Եպիսկոպոսին, որմէ յետոյ անուշ ձայնով հայերէն սիրուն երգ մը երգեց, որ մեծապէս հաճոյ անցաւ: Ապա զանազան պատիւներ ներկայացան ներկաներուն: Ժողովրդեան մէջէն խօսեցան նաև Յովսէփ էֆ. Ամպարեան և Միւնիթի էֆ. Ղուկասեան թարգման հանդիսանալով ժողովրդեան ուրախութեան և նոր վարժարանին հանդէպ անուշած մեծ յոյսերուն:

Կէս ժամ սիրալիր խօսակցութիւններէ յետոյ, ներկաները այցելեցին վարժարանը, և

չափ գոհ մնալով անոր կանոնաւոր կարգադրութենէն և ճաշակաւոր կահաւորումէն, խիստ լաւ տպաւորութեան տուի մեկնեցան ջերմ բարեմաղթութիւններ ընելով նոր վարժարանին յաջողութեան և յառաջդիմութեան համար:

Ամսոյս մէկէն կանոնաւորապէս սկսած է վարժարանին ուսումնական ընթացքը, և մինչեւ հիմա աշակերտներուն թիւը 85ին հասած է եւ երթալով կը բազմանայ, ինչ որ չէր ակնկալուեր ներկայ դժուարին պարագաներու պատճառաւ:

Մեր պատուական Քոյրերը ունին նաեւ փոքր աղայոց համար Մանկապարտէզ մը, որուն խնամքն առանձին վարժուհի մը յանձնուած է Առաք. Քոյրերուն հսկողութեան տակ:

Վարժարանին ուսումնական և ձեռագործի ճոխ ծրագրէն ի զատ կ'աւանդուի նաև հայերէն, արաբերէն, անգլիերէն և իտալերէն լեզուներն միջավայրին պէտքերուն համեմատ, օտար լեզուներուն համար նոյն ազգէն յատուկ եւ ձեռնհաս վարժուհիներ բըռնուած են:

Քաջայոյս ենք որ սոյն փայլուն ձեռնարկին յաջողութիւնն ազգու յորդոր մը պիտի ըլլայ մեր Եգիպտահայ կաթողիկէ հասարակութեան հարթելու իր բարեջան Հովուին յառաջդիմական քայլերուն առջեւ ամէն զբոսաւորութիւն, եւ գործունեայ աջակցութեամբ քաջալերութիւն և վստահութիւն պիտի ներշնչէ իրեն իրագործելու իր տածած ընտիր փափաքները յօգուտ Եկեղեցւոյ և Ազգին:

ՖԱՐՄԱՍՕՆՈՒԹԻՒՆԸ ¹

Գ. Ի. ՈՒ Խ Ա.

(Շար.)

21. Ստոյգ է թէ հաւատքը մեզ կ'արգիլէ անժողովակալութիւնը և ծայրայեղ սէրը հաճոյից և հարստութեանց. ասոր համար կը յանձնարարէ մահացուցումը և հողւոյ աղքատութիւնը և զմայլիլ կու տայ մեզ այն սակաւ

(*) Տես թիւ 470, էջ 684:

ւաթիւ անձանց վրայ՝ որոնք Աստուծոյ կան-
չուած են և կը կանչուին իբրեւ լուսաւոր
ջահեր ուրիշները լուսաւորելու համար, ուխ-
տելով և զործադրելով աւետարանական խը-
րատները:

Բայց այս ամէնը փոխանակ վեասելու՝
ամենամեծ օգուտներ կ'ընէ մեր բարեկեցու-
թեան այս երկրիս վրայ: Որովհետեւ նիւ-
թական բարիքները սահմանափակ են, իսկ
ընչաքաղցութիւննիս անսահման. վայե-
լիւ տեղւոյնքնիս բնականաբար բուն է.
ուստի, եթէ մարդուն սանձ մը չընէ ու
չչափաւորէ զանոնք և միտքը չբերէ որ
ինքը զգայական ենթակայէ մ'աւելի բան
մ'է և աւելի վսեմ վախճանի մը որոշուած
է, և ընդհակառակը միտքը դնէ թէ ինքը
լոկ այս կեանքի վայելքներուն համար եղած
սահմանուած է և անոր համար կ'ուզէ աս-
տեղական բոլոր վայելքները վայելել և կա-
րելի եղածին չափ քիչ նեղութիւն քաշել,
այն տոեմն՝ ցաւոց մէջ անհամբեր, ունեցա-
ծէն դժգոհ, և ուրիշին ունեցածին աչք
սնկող պիտի ըլլայ միշտ: Եւ որովհետեւ որ-
քան ալ բարեխառութիւններ և յառաջդիմու-
թիւններ ունենան, անկարելի է որ անով
մէկտեղ ամէն մարդիկ գոհ ըլլան, հետեւա-
բար յուսահատական և խժժական պայքար-
ներ տեղի պիտի ունենան, և մարդկային
գործունէութեան արտադրութիւնք պիտի
նուազին փոխունակ աճելու և բազմապատ-
կուելու, և այս պատճառաւ պիտի նուազին
նաեւ ընդհանուր բարեկեցութիւնն ու անոր
պայմանները:

Հաւատքի կորուստը՝ մարդոց բարձրագոյն
իմացականութիւն չի վաստկցներ, ոչ ալ
կարողութիւն և նորանոր զգացումներ, ոչ
ալ բնութեան նորանոր ուժերու գաղտնիք-
ներ կը յայտնէ կամ ունեցածները կ'աւելցնէ,
ո՛չ, ո՛չ: Գիւտերն ու բարեխառութիւնները
բնական պատճառներով կ'ըլլան և ոչ բարո-
յական. և եթէ ասոնք ալ կ'ազդեն անոնց՝
անուղղակի կերպով և բոլորովին ի նպաստ
հաւատքի է այն, քանզի հաւատքն է մար-
դուն պայծառ միտք, հանդարտութիւն հոգ-
ւոյ, կամքի կորով, առաջադրութեանց մէջ

հաստատամտութիւն, զոհողութեան և եզ-
բայրասիրութեան ոգի առեողը. մինչդեռ
ծայրայեղ նիւթական վայելքը՝ որ հանդեր-
ձեալ կեանքը ուրացողներուն քով կը զըտ-
նուի, զգացումները կ'անդամալուծէ և միտ-
քը բթացնելով՝ հոգին կը նուաստացնէ ու
կոշտութեան, անզգայութեան, անազորու-
նութեան կը մատնէ. բնազդը անհանգարտ,
կիրքերը դիւրագրգիռ, կամքն ու մարմինը
յոգնած դադրած և ամբողջ մարդը հասաէր
վիճակի կ'ենթարկէ:

Գ. Լ. ՈՒՆԻՔ.

Կաթողիկէից պարսկականութիւնները
Ֆարմասունքեան դեմ

Յօդուած Ա.— Զգուանի փարսասունքեան

22. Նախ և առաջ կարեւորագոյն է ծա-
նօթացնել ամենուն Ֆարմասունքեան բնոյ-
թը, անոր առաջարկները, գործածած միջոց-
ները. թէպէտեւ մերկապարանոց յայտնի է
ամէն բան:

Ամենակարեւոր է նաեւ հաւատացեալնե-
րուն նախազգուշութիւնը, որպէս զի չխաբ-
ուին, անակնկալի առջեւ չգտնուին ու
յանկարծակիի գալով իրենց անունը չտան
ոչ անոր և ոչ ալ համանման աղանդներու և
ընկերակցութեանց: Նամանաւանդ երկտա-
սարդութիւնը շատ արթուն գտնուելու է:
Ծնողք, խնամակալք և որոնք որ պատաս-
խանատուութիւն ստանձնած են, ամէնքն
ալ աչալուրջ հսկողութիւն ընելու պարտա-
ւոր են անոնց վրայ:

23. Անարժան, անարգական և յիմարա-
կան բան է գրուելն ամբարշտական նպատակ
և վախճան ունեցող ընկերութեանց. նոյն-
պէս գաղտնի կամ ըստ բաւականի չըմբռ-
նուած ընկերութիւններու, և կուրորէն ու-
րիշի մը հնազանդութիւն խոստանալ՝ երբ
անիկա աստուածային և նոյնիսկ մարդկային
արդար իրաւանց և օրինաց հակառակ բաներ
կը հրամայէ:

Սուրբ եկեղեցւոյ մէջ ունինք կրօնաւոր-
ներ որոնք հնազանդութիւն կ'ուխտեն. բայց
կ'ուխտեն իրենց միաբանութեան կանոնաց

համաձայն, որոնք Սուրբ եկեղեցիէն լաւ մը քննուած և իրրեւ սրբապան կանոններ հաստատուած ու վաւերացուած են, և այն պայմանաւ կ'ուխտեն հնազանդիլ որ հրամայուած բանը մեղք չըլլայ կամ մեղք չունենայ իր մէջ:

Եթէ երբեք կրօնաւորական հաստատութեան մեծաւոր մը իր իշխանութիւնը չարաչար գործածէ կամ անով զեղծանիլ ուզէ կանոններուն հակառակ, այն ստեն ստորակարգեալը կրնայ և ազատ է դիմելու եկեղեցական բարձրագոյն իշխանութեան և անոր ատեանին: Նոյնպէս կրնան ընել ամէն հաւատացեալք երբ բանաւոր պատճառ ունենան:

Այս պատճառաւ աւետարանական հնազանդութիւնն անկաշկանդ, հրապարակական և անստղծութիւն է և միջոց մ'է ապահովագոյն կերպով բարիք գործելու և նոյնիսկ գործելու ինչ որ կատարեալ է, զեղեցիկ է, օգտակար է. հետեւաբար ամէն կերպով և ամէն պարագայի մէջ՝ ֆարմատօնական հնազանդութիւնէն բոլորովին և հիմնովին տարբեր է:

24. — Փարմատօնութեան մէջ զժբախտաբար ինկողը եթէ տակաւին պահած ըլլայ սրտին մէջ իր նախկին ուղիղ հաւատքէն կայծ մը, փոքրիկ մաս մը, նոյնիսկ հեւքոտ զգացում մը, պարտական է այնպիսին բացէ ի բաց իսկոյն անկէ քաշուիլ ելլելու. քան զի սխալ քայլ աւելցնելն համար ամենալաւ օգտակարագոյնն է իսկոյն ուղղել իր սխալ քայլը, եթէ չ'ուզեր մօտալուտ մահաբեր վտանգին մէջ գլտորիլ: Եթէ այսպէս ընելով ծաղու և մեղադրանաց ալ հանգիպի, փոյթ ընելու չէ, այլ մոտաբերելու է թէ՛ լաւագոյն է այս անցաւոր կեանքի մէջ սխալն ուղղել, յանցանքը ողբալ քան հանդերձեալին մէջ չարաչար տանջուիլ յաւիտեանս: Ս'ն ուրեմն, ո՛վ զժբախտ, ֆարմատօնութեան զո՛հ եղող եղբայր, յոյսդ դիր բարեգութ և ամենախնամ Աստուծոյ վրայ, որ իւրաքանչիւրին պէտքին համաձայն կ'աւատածեանք իր արագահաս օգնութիւնը և շնորհքը:

Ս. Յ. Ե. Ի. Ս. Յ. Բ.

ՄԻԱՅՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ Նախագահը հետեւեալ պաշտօնագրով անցեալները իր ամբողջ ժողովուրդը հրաւիրեց խաղաղութեան համար հրապարակաւ աղօթելու:

«Նկատելով որ աշխարհի մեծ ազգերը զէնք սուած են իրարու դէմ, և պատերազմը կռիւի կը մղէ այսօր միլիոնաւոր զինուորներ, զորոնք չկրցաւ այս սոսկալի զոհէն զերծ պահել Պետական անձերու դիւանագիտութիւնը, և նկատելով որ այս, ինչպէս նաեւ ուրիշ ամէն պարագաներու մէջ, առանձնաշնորհութիւն և պարտք ունինք Ամենակալ Աստուծոյ խորհուրդ և օգնութիւն խնդրելու, Անոր առջեւ խնարհելով և խոստովանելով մեր սկարութիւնը և մեր խեղճ խնամտութեան այսօրինակ վիթխարի պատահարներու գերիվերոյ հանդիսանալու անազօրութիւնը, նկատելով նաեւ որ Միացեալ Նահանգներու ժողովուրդը յատկապէս կը բաղձայ խաղաղութեան դատին նպաստել աղօթքով, յորդորով և ամէն տեսակ բարի ծառայութիւններով:

Այս չարժաոյթներով, ես Ուսոյ Ուիլսոն, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահը, աղօթքի և պաղատանքի օր կ'որոշեմ հոկտեմբեր ամսուն չորսին հանդիպող կիրակին, և թախանձագին կը խնդրեմ Աստուծոյ հաւատացող ամէն անձերէ, որ նոյն օրը հաւաքուին պաշտամունքի յատկացուած վայրերը և մասնակցին այն պաղատանքներուն, որ Ամենակալին պիտի մատուցուին. որպէս զի Ինք տրամադրէ, ուղղէ մարդկային խորհուրդները, կարգադրելով այն բաները որ անոնք չեն ձեռնհաս ո՛չ կարգադրելու ո՛չ փոխելու. գթալով այն ազգերուն վրայ, որ այժմ պատերազմի սոսկալի արհաւիրքներուն ենթարկուած են, ցոյց տալով իր ամենողորմ բարութեամբ, ելքի ճամբայ մը հոն՝ ուր արարածները անտառի են սէն հնարք գտնելու. որպէս զի Ինք վերստին խաղաղութիւն պարգեւէ և դարձեալ հաստատէ ազգերու մէջ այն միաբանութիւնը՝ առանց որու չի կրնար ըլլալ

աշխարհի վրայ ո՛չ երջանկութիւն, ո՛չ ճշմարիտ բարեկամութիւն, ո՛չ ալ մասաւորական աշխատութեան ուէ լուրջ արդիւնք: Խընդրե՛նք եւս Աստուծո՛ւէ որ ներէ մեր մեղքերուն, իր սուրբ կամքին մասին ունեցած տգիտութեան, մեր յամառութեան, և մեր շատ մը մոլորութիւններուն, և մեզ առաջնորդէ, հնազանդութեան ճամբով, իմաստութեան օթեւանը, եւ մեղի ներշնչէ մեր հոգիները մաքրող եւ կատարելագործող մտածումներ եւ խորհուրդներ:»

ՅԱՆԴՈՒԳՆ ՇԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . —

Սրահաւորի թղթակիցը Պերլինէն կը գրէ . — Բոցտամցի Կոմս Պարօլտինկէն . որուն մայրը Ամերիկացի է, Երկաթէ Խաչի պատուանշանը տոած է՝ հետեւեալ յանդուգն շահատակութիւնը յաջողութեամբ գլուխ հանելուն համար: Կոմսը Անգլիացի սպայի մը հաղուստը հագած, գնաց Ֆրանսական գիծերուն մօտ, և հոն խնդրեց որ զինքը՝ անգլիերէն գիտցող մէկու մը քով տանին: Ընդհանուր հրամանատարին քով կ'առաջնորդեն այս գերման յանդուգն սպան, որ կ'ըսէ. «Ես անգլիացի տեղակալ եմ, եւ կու գամ տեղեկանալ թէ ե՞րբ յարձակելու զիտաւորութիւն ունիք, որ զիրքին վրայ պիտի յարձակիք և ի՞նչ են ձեր յատակագիծերը: Մութ էր, հրամանատարը մօտէն չգիտեց իր խօսակիցը, չկրցաւ անոր գերման սպայ մը ըլլալը նշմարել և անոր պահանջած տեղեկութիւնները տուաւ: Կոմսը դարձաւ գերման բանակատեղին. առած տեղեկութիւնները հաղորդեց իր հրամանատարին: Գերմանները յարձակեցան և ճակատամարտը շահեցան:

Ուրիշ մըն ալ. — Կոմս Շվէրիկ՝ երբ խուզարկութիւն մը կատարած պահուն, կը հասկընայ թէ Ֆրանսական գիծերուն մօտեցած է առանց պաղարիւնը կորսնցնելու, կ'երթայ Ֆրանսացի սպայի մը մօտ և անգլիերէն լեզուով կ'ըսէ. — «Կը հաճի՞ք զիս անգլիական բանակատեղին զրկել տալ: Դժաման կորսնցողի և մինչեւ մորթի թրջեցայ և ստիպուեցայ հալուստներս հանել և մեռած գերման սպայի մը հալուստները հագնիլ: Հիմա

այս զգեստով կը վախճամ անգլիական շարքերուն մօտենալ, վախճալով որ հրացանի կը բռնուիմ: Ֆրանսացի սպան՝ գերման սպային սահուն կերպով անգլիերէն խօսելէն խաբուելով և յիշելով որ ասկից առաջ Ֆրանսացիները սխալմամբ շատ մը անգլիացի սպաներ սպաննած են անոնց գերմանական հագուստէն խաբուելով, զայն առաջնորդեց մինչեւ անգլիական բանակատեղին: Կոմս Շվէրիկն խթանեց իր ձին, ու երբ Ֆրանսացի առաջնորդը իր սխալը հասկցած, կրակ ըրաւ այդ յանդուգն սպային վրայ, անոր ձին սայթաքեցաւ, գնդակը գլխուն վրայէն անցաւ և անմիապ զառնալով իր բանակատեղին իրր վարձ Երկաթէ Խաչի պատուանշանը առաւ:

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՌԻՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ . — Ս. Հայրը Բենեդիկտոս ԺԵ. Հոկտ. 21ին մասնաւոր ունկընդրութեան ընդունեցաւ Վսեմ. Օղակալիոյ Գաճիւնոյ տէ Աձէվէտոյ Կարդինալը, Կրօնաւորաց Սուրբ Ժողովին քահանայ, եւ Սորբէնդոյի Սրբապետական Արհի. ձուլէքքէ ձուլութիւնեանին եւ ուրիշ բազմաթիւ բարձրաստիճան եկեղեցականներ:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Ամենապատիւ Գերեքը. Հոգեւոր Տէրը, Պօղոս Պետրոս ԺԳ. Խէրվեան, Կաթողիկոս-Պատրիարք Տանն Կիլիկիոյ, ի պատասխան Բենեդիկտոս ԺԵ. ընտրութեան առթիւ գրած շնորհաւորական նամակին՝ ընդունեցաւ հետեւեալը.

Վասիլյան, 20 Հոկտ. 1914

Թիւ 356

Ամենապատիւ Տէր,

Սրբապան Հայրը Բենեդիկտոս ԺԵ. Վեհափառ Պապը, մասնաւոր բարեացակամութեամբ եւ հաճութեամբ ընդունեցաւ այն յարգանքի հաւաստիքը, որ, յանուն Կաթողիկէ Հայոց, մատուց իրեն Ձեր Ամենապատիւ Տէրութիւնը:

Վեհափառ փահնայապետը ներշնչուելով իր Վեհափառ եւ Պատկառելի Նախորդներուն օրինակէն, Հայոց համար ամենէն լաւակամ դիտաւորութիւններով տուգորուած է, եւ միտքը դրած ըլլալով, Տիրոջ օգնութեամբ, այդ ազնիւ ազգին նկատմամբ միշտ հայրական հոգ եւ խնամք մը ունենալ, ի նշան առանձին բարեացակամութեան, սրտանց կը շնորհէ Ձեր Ամենապատուութեան, եւ Պատրիարքութեան Եպիսկոպոսներուն, Փահնաներուն եւ հաւատացեալներուն՝ խնդրուած Առաքելական

Օրհնութիւնը, գրաւական Երկինքի յորդառատ եւ ընտիր շնորհքներուն:

Այս բարեպաշտե՛հ առեթէն օգտուելով կ'ընծայեմ Ձեզի իմ ամենամեծ համարմանս հաւաստիքը, որով եմ Ամեն. Տէրութեանդ.

Աճճանունէր ծառայ
ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՍՐԱՐԻ

* * Ազգային - Պատրիարքական Սիւնհոգոսին առթիւ հրատարակուած Կոնդակը, որ Կ. Արազանցի նստորդ թիւին մէջ գրուած էր եւ որ Հոկտ. 25ին, կիրակի օրը, Աթոռանիստ Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, ձայնաւոր պատարագի ատեն, պաշտօնապէս կարդացուած էր, ղրկուեցաւ Աւագ Թեմի բոլոր ժողովրդապետութիւններէն եւ Պատր. փոխանորդութիւններէն զատ, նաեւ բոլոր Արհի. Արհի. Վեհակաւորաց:

* * Նոյեմբեր 5ին, Ս. Աստուածածին Աթոռանիստ եկեղեցւոյն մէջ, Բարեկիշակ Հասուն Կարդինալին հոգւոյն համար պատարագ մատուցուեցաւ ի ներկայութեան Ամեն. Գերերջ. Հոգեւոր Տէրոջ եւ Արհի. Կ. Պատրիարքական փոխանորդ. Գերապաշտաւին եւ բազմաթիւ վարդապետաց եւ հաւատացեալներու: Պատարագէն յետոյ հոգեհանգըստեան պաշտօն կատարուեցաւ: — Նոյն օրը Թեմի ունեցաւ նաեւ Աւագ Թեմի քահանայից ամսական կրթութիւնը եւ բարոյական դիմաւորութիւնը ժողովը:

Ներքին եւ ՄիջԱզգ. Ազգ. Գործեր. — Օսմ. գործակալութիւնը կը հաղորդէ Հոկտ. 30ին. — Կայս. նաւատորմին մէկ փոքր մասը Հոկտ. 27 եւ 28ին, երբ Սեւ ծովուն մէջ ռազմափորձ կատարելու վրայ էր, ռուս նաւատորմը նախ եւ առաջ այս բոլոր փորձերը հետապնդեց եւ խանգարեց ու երէկ Հոկտեմբեր 29ին, հինգ զէպի օր, կայս. նաւատորմին վրայ յարձակելով սկսաւ թշնամութեանց:

Տեղի ունեցած կռիւն ատեն, կայս. նաւատորմին կողմէ Բիրօք անուն հինգ հազար թօնօ տարողութեամբ եւ 700 թորփիլ կրող թորփիլակիր նաւ մը ընկղմուեցաւ եւ ռուս թորփիլանաւերէն մէկը ծանր վնաս կրեց եւ ածխանաւ մը գրաւուեցաւ:

Դիպրէքը Միլիէ թորփիլանաւուն կողմէ արծակուած թորփիլ մը ընկղմեց Քոպանից անուն 1100 թօնօ տարողութեամբ ռուս թնդանօթակիրը եւ Մուսլէնէթի Միլիէի արծակած մէկ թորփիլով ալ ռուս ուրիշ թնդանօթակիր մը խիստ ծանր վնասով վնասուեցաւ:

Այս նաւամարտին միջոցին ընկղմած ու քանդուած ռուս մարտանաւերէն ազատած երկու ոսկոյ եւ 72 զինուոր դերի բռնուեցան: Փառք Աստուծոյ կայս. նաւատորմը չվնասուեցաւ եւ նաւամարտը շարունակուեցաւ ի նպատակ կայս. նաւատորմին:

Կայս. կառավարութիւնը կայս. նաւատորմին մէկ փոքր մասէն դէմ ռուս նաւատորմին կողմէ

գործուած այս յարձակման առթիւ անշուշտ խստիւ պիտի բողոքէ:

Հոկտ. 31. — Գերի բռնուած ռուս նաւագներուն յայտարարութիւններէն եւ ռուսական նաւատորմին մէջ ականակիր նաւ գտնուելէն եղրակացուեցաւ թէ ռուս նաւատորմին ղիտուած էր ականներով փակել Վոսփորի մուտքը եւ ամբողջովին քանդել կայս. նաւատորմը, դանիկայ այս կերպով երկուքի բաժնիէն ետքը: Մեր նաւատորմը կարծելով որ տոյսպէս կը գտնուէր անակնկալ յարձակումի մը առջեւ եւ ենթադրելով որ Ռուսերը թշնամութիւն բացած են առանց կանխաւ պատերազմի յայտարարութեան, հետապնդեց ցրուած ռուս նաւատորմը, ռմբակոծեց Սեփաստաբօլ քաղաքը եւ Նոփրօսիքի նաւահանգստին մէջ քանդեց քարկղի 50 մթերանոց, ղինուորական 15 փոխադրանաւ, արմտիքի մթերանոցներ եւ անթեւ հեռագրի կայանը: Մեր նաւատորմը բաց աստի Օտէսայի մէջ ընկղմեց ռուս յածանաւ մը, ծանրապէս վնասեց ուրիշ յածանաւ մը, եւ կը կարծուի թէ այս մարտանաւն ալ ընկղմած է: Բեռնաբարձ ուրիշ հինգ նաւեր, որ կը գտնուէին նոյն նաւահանգստին մէջ նոյնպէս ծանրապէս վնասուեցան: Ռուս կամաւոր նաւատորմէն շոգեհաւ մը ընկղմեցաւ եւ քարկղի հինգ մթերանոց քանդուեցան: Օտէսայի եւ Սեփաստաբօլի մէջ ռուս ծովեզերքէն թնդանօթի կրակ բացին մեր նաւատորմին վրայ:

Նոյ. 3. — Մեր Կովկասի սահմանազուխէն առնուած պաշտօնական տեղեկութիւններէն կ'երեւի թէ Ռուսերը մէկ քանի կէտի վրայ յարձակել են սահմանազուխի մեր ջոկատներուն վրայ, բայց հարկադրուել են ետ քաշուիլ մասամբ, կորուստներով, մերիներուն կողմէ ցոյց տրուած ազդու դիմադրութեան առջեւ:

Միջերկրականի մէջ անգլ. յածանաւերը կրակ բացին եւ ընկղմեցին իրենց մօտեցած հելլէն թորփիլանաւ մը, դանիկա թորփ. թորփիլանաւ կարծեւրով: Այս երկու դէպքերը ցոյց կու տան թէ մեր թշնամիները ցամաքի եւ ծովու վրայ մեզի դէմ բացաց են երկուր ատենէ ի վեր իրենց մտադրած թշնամութիւնները: Օսմ. բովանդակ ժողովուրդը պատրաստ է, ապաւինելով աստուածային օժանդակութեան, միակ պաշտպան իրաւունքի եւ արդարութեան, դիմադրել այս յարձակումներուն, որոնց դիմումն է իր գոյութիւնը չնջել:

Նէյ. 3. — Կովկասի սահմանազուխին վրայ Ռուսերը սկսան ամրութիւններ շինել:

Այս առտու թէեւ Անգլիացիք սկսան ռմբակոծել Իարդանէլի նեղուցին մուտքը 16 քիլմ. հեռուէն, բայց մեր մէկ մարտկոցէն արծակուած մէկ քանի ռուսներ հրդեհ մը յառաջ բերած ըլլալով անգլ. զրահաւորներէն մէկուն մէջ, 10 վայրկեան ետքը անգլ. մարտաւաւերը ետ քաշուեցան եւ այլեւս անտեսանելի եղան:

Անգլիացիք եգիպտական սահմանազուգը պարպելէ ետք կը քաշուին դէպ ի Զրանցքը, քան դելով իրենց ճամբուն վրայ գտնուած քիւղերը:

Աքապայի նաւահանգիստը, որ կը գտնուի յիշեալ սահմանազուգին վրայ, Նոյիմբեր 1ին անգլ. նաւաբաժնի մը կողմէ ռմբակոծուեցաւ: Յետոյ Անգլիացիք փորձեցին զօրք ցումաք հանել, բայց անգլ. չորս զինուոր մեռան եւ միւսները շուտով իրենց մարտանաւերը քաշուեցան: Հակառակ անոր որ հազարաւոր ռումբեր արձակուեցան Անգլիացիներուն կողմէ, մեր կողմէ միայն մէկ ստիկան զինուոր, Հաճի Իպրահիմ անուն, մեռաւ:

*** Պրանսայի, Անգլիոյ, Ռուսիոյ եւ Սերպիոյ զեապանները օտմ. կառավարութիւնէն պահանջեցին իրենց անցագրերն եւ Պոլսէն մեկնեցան: Իտալիա ստանձնած է Թուրքիոյ մէջ Ռուսիոյ շահերուն պաշտպանութիւնը, իսկ Ամերիկա՝ Պրանսայի, Անգլիոյ եւ Սերպիոյ շահերուն պաշտպանութիւնը:

*** Հանրագումար շինութեանց նախարար Ձիւրիւքսուլու Մահմուտ փաշայ, Առեւտրական նախարար Սիւլէյման էլ Պոլսի մէջ է, եւ Հեռագրական եւ Թղթատարական նախարար Ոսկան էֆ. Մարտիկեան հրաժարեցան եւ իրենց հրաժարականներն ընդունուեցան: Հանրագումար շինութեանց նախարարութեանը փոխանորդաբար պիտի վարէ ծովային նախարար ձէմալ փաշայ, Թղթատարական նախարարութիւնը՝ կրթական նախարար Նիւքրի պէյ: Զրոյց կայ թէ առեւտրական սւ երկրագործական նախարարութիւնը պիտի յանձնուի Էտիրնէի կուսակալ Հաճի Ատիլ պէյի:

— Եւեւմոյի նախարար ձալիտ պէյ եւս նոյ. Յին հրաժարեցաւ եւ հրաժարայանն ընդունուեցաւ: Ներքին գործոց նախարար Թալէաթ պէյ փոխանորդաբար պիտի վարէ եւեւմոյի նախարարութիւնը:

*** Նոյեմբեր 5, ընդհ. բանակեալէն. — Երէկ

մեր քաջ հեծելազօրքն եւ Ռուս խաղախ հեծելազօրքն միջեւ կռիւ տեղի ունեցաւ: Խաղախները պարտուելով նահանջեցին:

*** Բանակին Սպարապետը կը հաղորդէ թէ պատերազմի վիճակին սլատառաւ բոլոր նամակները բաց պիտի յանձնուին նամակատունները, թէ նամակներն ու հեռագրերն պէտք է գրուին լոկ հետեւեալ լեզուներէն՝ մէկով. Թուրքերէն, արաբերէն, ֆրանսերէն, գերմաներէն:

*** Անգլիա՝ Եգիպտոսի Խտիվ անուաներ է Խտիվ Ապպաս Հիւմի փաշայի հօրեղբայրը՝ Հիւսէյին Բեամիլ փաշայ:

*** Հռոմ, նոյ. 4. — Իտալիոյ հրաժարեալ դահլիճին տեղ նորը կազմուեցաւ հետեւեալ կերպով. — Մ. Սալանտրա՝ վարչապետ եւ ներքին գործոց նախարար, Մ. Սօնինօ՝ արտաքին գործոց, Մ. Մարթինի՝ գաղթային, Մ. Օրլանտօ՝ դատական նախորդ դահլիճին միւս անդամները կը պահեն իրենց պաշտօնները:

Պերլին, 5. — Անգլիական աղբիւրէ կը ծանուցուի թէ երէկ նաւամարտ մը տեղի ունեցած է Եամբուլթի բացերը:

(Եամբուլթ Հիւսիս. ծովուն վրայ անգլիական նաւահանգիստ մըն է: Ունի 56,000 բնակիչ):

Վիեննա, 4. — Չինաստան՝ Ամերիկայի հետ համախորհուրդ ձաբոնի դէմ զօրաշարժ կ'ընէ:

Վիեննա, 4. — «Յիշմոտէնպիթ» եւ ուրիշ թերթերը կը քննադատեն Չարին բանակին ուղղած նոր յայտարարութիւնը եւ կ'ըսեն թէ Չարը կը խոստովանի ինքն իսկ որ ռուս քաղաքականութեան վերջնական նպատակն էր Պոլսոյ գրաւումը, սակայն Թուրքիա ուրը քաշեց իր պատեանէն:

*** «Պրանքֆուրթէր Ձայթունկ» կ'արտատպէ Հովասի մէկ հեռագիրը, որ կ'ըսէ. «Չինի Թաօի բերդը քանդուեցաւ: Գործողութիւնք կը շարունակուին յաջողութեամբ»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պիոս Ժ.	705
Յիսուս Բրիսոս	707
Եօքնեակ Բրիսոսնէի	709
Հին վաւերաբուրքեր	710
Աղբխանդիայէն	712
Ֆարմասօնութիւնը	215
Այլեւայլ	717
Տեղեկագրական	718

ԱՐՏՈՒՍՏԷՐ

ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՂԳՐԱՊԵՏ

ԳԵՐՈՐ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԵԱՆ

Տպարան Գ. Արձագանգ Շարաքաթեթ, Բերա, Պալամ փողոց քի 5, Կ. Պոլիս

ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ.— Արսասան-
ման տար. 3ր. 10. վեցամս 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոյիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատեղին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է զրկուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոյմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Գրիտա. Վարդապետութեան. գին 2 դհկն:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է՝ որ և իցէ տպագրական գործոց համար: Եւ տպուին ամեն տե-
տակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-ատրէսներ,
մահազգներ, եւն. եւն.: Գիները անմրցելի կերպով ատան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
մնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: *Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislau, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.*

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accreditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.